



ԱՎԵԴԱՐԱՆԻ ՉԱՅՆ

An Armenian Religious Monthly

Propr. Rev. K. T. SARIAN

Արամեաներ՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

Խմբագիրներ՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ և Կ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ոչ - յարանուանական և անկախ կրօնական պարբերաբեր

Ա. ՏԱՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1939

ԹԻԻ 9



Կեանքի խաղը՝ Սասանային հետ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԱԾԽԱՐՅԷ

Խաւառակուռ Ամերիկայի մէջ.— Զանից Ընկերութեան օրկանը կը գրէ. «Ժողովի մը մէջ բարձր վարժարանի մը ուսանողէն կը խնդրուի կարգալ կտոր մը Սբ. Գրքէն: Կ'սկսի սապէս, «Պիտի կարգամ Յովհաննէսին Գ. բաժանում մաս 16էն»: Ժողովէն ետքը եկեղեցւոյն հովիւը մօտենալով երիտասարդին կ'ըսէ մեղմօրէն, «Զէի՞ր գիտեր որ Սբ. Գիրքը գլուխներու և համարներու բաժնուած է, և ոչ թէ բաժանումներու և մասերու» — «Ոչ, կը պատասխանէ» երիտասարդը, ասկէ առաջ երբեք ձեռքս առած չէի Սբ. Գիրք: Յիշեալ թերթը մեկնաբանելով դէպքը կ'ըսէ, «Այս բանը զարմանալի պիտի չըլլար Ափրիկէի կեդրոնը, սակայն Միաց. Նահանգաց մէջ ասիկա մարդուն ակոնջներուն կը հնչէ ահազանգի մը նման: Ահա երիտասարդ մը, որ ամբողջ իր կեանքին, ապրած է եկեղեցիին մօտ, և լուսաւորեալ Ամերիկայի դպրոցներէն մէկուն մէջ ստացած իր ուսումը, այսուհանդերձ երբեք իր ձեռքը Սբ. Գիրք չէ առած»: Արդեօք ուրիշին ձեռքն ալ չէ տեսած...»

* Սեւամորթ հրեաներ.— «Բըրաֆըսի» թերթը կը գրէ, «Արեւմտեան Ափրիկէի տանաւայրի տեղէն կուգայ զարմանալի լուր մը, ըստ որում, հոն գոյութիւն ունի «Պէնի Եբրեմ» անուն սեւամորթ հրեաներու ցեղ մը: «Մուցառոտ չըջան» ըստ ամենավայրի շրջանին մէջ գտնուած մօտ երկու հազար մերկ, սեւամորթ վայրենիներ որոնք կ'ապրին քսանի չափ գիւղերու մէջ: Ասոնք կ'ապրին նահապետական կեանք: Ունին քանի մը օրինակ հնգամատեան գիրքեր, կը հետեւին հրեական սովորութիւններու, և կը տօնեն հրէական բոլոր տօները»:

* Իրաւն ու Պաղեստինը. Սըր Էտուին Պէվըն կ'ըսէ. «Իրաքը (հին

Բաբելոնը) նախկին փառքին վերադարձնելու մէջ ամենամեծ զոհուարութիւնը այժմու բնակչութեան ցանցաւութիւնն է: Անցեալի մէջ, հաշիւ եղած է որ Բաբելոն 7-8 միլիոն բնակչութիւն ունէր: Ներկայ բնակչութիւնը (մէկ մասը կէս-վաչկատուն ցեղ) երկուքը կէս միլիոն է: Սյսպէս մենք ակոնջատես անք վրդովիչ հակասութեան: Պաղեստինի մէջ կայ 820,000 արաբ բնակչութիւն, որոնք արգելք կ'ըլլան հրեաներուն իրենց հայրենիք վերադառնալուն, մինչդեռ անապատին միւս կողմը՝ 500 միլիոն դէպի տրեւելք՝ կայ երկիր մը, որ հսկայ կարելիութիւններ ունի, և որ կ'աղաղակէ ուրիշ 4-5 միլիոն արաբ բնակիչներու համար:

* Նիւ Եօքի աշխարհագրէսի մէջ.— Միւնքսչիի կողմէ նկարուած, «Բրիտոս Պիղատոսի առջեւ» պատկերը ցուցադրուած է սոյն աշխարհագրէսին մէջ: Ան գծած էր այս պատկերը երբ դեռ երիտասարդ էր, զոր երբեք չըկըրցաւ գերազանցել Նիւթալիոն շատ խեղճ վիճակի մէջ էր երբ հարուստ վաճառական մը գնեց զայն, սակայն արուեստագէտը ծախելէ առաջ պայման դրած էր որ պատկերը տեսնելու միշտ ազատ ըլլայ, ինչ որ չնորհուած է:

* Ամերիկայի մեծաթիւ Բող. յաւուրուանութիւններ.— Մեթոտականներ 8 միլիոն անդամ ունին: Եթէ կարելի ըլլար Մկրտչականներուն միանալ իրարու հետ, պիտի կազմէին մեծագոյն յարանուանութիւնը, ունենալով 10 միլիոն անդամ: Երիցականներ իրարու հետ ձուլումի հեռապատկերը ունին իրենց առջեւ, այդ պարագային 4.5 միլիոն անդամով պիտի ըլլան երրորդ խոշոր յարանուանութիւն մը կը գրէ «Հէրլտ ալ Հօլինէս» թերթը:



ԱՄՍԱԹԵՐԹ
AYEDARANI TSAIN

An Armenian Religious Monthly

Propr. Rev. K. T. S A R I A N

Արտոնաւեր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

Խմբագիրներ՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ և Կ. Թ. ՌԻՄՍԵԱՆ

Ոչ - յարանուանական և անկախ կրօնական պարբերաբր

Ա. ՏԱՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1939

ԹԻՒ 9

Սբ. Հոգին ի՛նչ կ'ընէ

Գրեց՝ Տօֆ. ԹՕՐԻ (*)

Ասան մը, քրիստոնեայ ըլլալէս և իբր Աւետարանի պաշտօնեայ՝ անոր մէջ ծառայելէս ետքը, ուշադրութիւնս գրաւուեցաւ Գործք Առաքելոցին մէջ գործածուած խօսքերէն, Օրինակ՝ «Հոգւով Սրբով մկրտուած», «Հոգւով Սրբով լեցուած», «Հոգին Սուրբ անոնց վրայ իջաւ» խօսքերը նոր բաներ երեւցան ինծի Եւ երբ ուսումնասիրեցի զանոնք յարակից համարներովը միասին, համոզուեցայ որ սոյն խօսքերը կը բացատրէին կեանք մը կամ փորձառութիւն մը՝ որուն մասին ևս բան մը չէի գիտեր։ Ասկից զատ գոհմտացի գիտնալով թէ Աստուծոյ փափաքն է՝ որ իւրաքանչիւր զաւակը տմէն դարու մէջ, այսօր՝ ինչպէս ա-

ռաքեալներու ժամանակ, մկրտուին Հոգւով Սրբով։

Գործի սկսայ շատ ագիտօրէն — կը կոսկածիմ թէ ուրիշ մէկը գտնուի որ ինձմէ աւելի ագիտաբար գործի սկսած ըլլայ — ստանալու այդ օրհնութիւնը։ Աստուած որ միշտ պատրաստուկամ է՝ օգնելու ուղղամիտ մէկու մը, օգնեց ինծի ալ տեսնելով անկեղծութիւնս։ Ինծի առաւ ներհայեցութիւն մը որուն յարգիւնքը եղաւ այլակերպուած քրիստոնեայ փոռձառութիւն մը, և կերպարանափոխուած պաշտօնէութիւն մը։ Սկսայ զանազան համագումարներու և ժողովներու մէջ յայտարարել ինչ որ գտած էի Սբ. Գրոց մէջ, և հարիւրուոր ու հազարաւորներ իվիրջոյ ունեցան միեւնոյն փորձառութիւնը։ Այն օրէն իվեր՝ միշտ ընդարձակուող շրջանակներու մէջ — և այդ շրջանակները տառացիօրէն կը հասնին աշխարհի տմէն կողմը — իմ ուրախութիւնս եղած է

(*) Նկատելով ներքին մեծ կարեւորութիւնը, նաեւ շատերուն մեք մեք տրուող Եփեսոսի սոյն ներքին վրայ, յարմար դասեցիմք հեղինակաւոր անձի մը գրչեմ ելած սոյն յօդուածը բարգձմանաբար դնել այս տեղը։— Ծ. Խ.

տեսնել, հարկերաւոր և հազարաւոր մարդիկ եկած աւելի իրական, լեցուն և կենդանի փորձառութեան՝ զոր Աստուած պատրաստեր է մեզի համար իյալեալ և Յարուցեալ Քրիստոսով: Գործք. 1:4-8ին մէջ կը գտնուի ըսելիքներուս նիւթը՝ Նկատեցէք Հմ. 5ին մէջ յիշուած սա խօսքը. — «Դուք Հոգւով Սրբով պիտի մկրտուիք»:

Ի՞նչ կը նշանակէ Ան

Ասիկա աւաջին հարցումն է. — Ի՞նչ կը նշանակէ Հոգւով Սրբով մկրտուիլ:

Առաջին, Հոգւով Սրբով մկրտութիւնը որոշ փորձառութիւն մըն է. և մէկը կրնայ գիտնալ թէ այդ փորձառութիւնը ունի թէ ոչ: Ասիկա յայտնի է 4րդ համարէն՝ ո՛ւր Յիսուս կը պատուիրէ իր աշակերտներուն չհեռանալ Երուսաղէմէն, այլ սպասել Հօրը խոստմունքին: Եթէ փորձառութիւնը որոշ եղած չըլլար, պիտի չկրնային գիտնալ թէ երբ կը լինան սպասումի օրերը և գործիսկսելու ժամանակը: Եփեսոսի մէջ պատահածէն այս բանը կը տեսնենք դարձեալ մեկին և որոշ կերպով: Պօղոս կը հարցնէ խումբ մը աշակերտներուն, «Երբ հաւատացիք Սբ. Հոգին առի՞ք» (Գործք. 19:2): Պօղոս, անտարակոյս, ակնկալեց այո՛ կամ ո՛չ պատասխան մը, և անոնց պատասխանը եղաւ ժխտական: Բայց երբ անոնք Յիսուսի անունով մկրտուեցան և Պօղոս իր ձեռքերը անոնց վրայ դրաւ, զԱյն առին և Անով մկրտուեցան: Արդ, այս օրերս չատ կը խօսուի սոյն նիւթին վրայ՝ որ շատ անորոշ և աղօտ կը թուի: Կը լսես մարդիկ, որոնք աղօթածողներու մէջ կ'աղօթեն Հոգւով Սրբով մկրտուելու համար: Սակայն ժողովէն ետքը գնա հարցուր այդ աղօթքը ընողին, «Եղբայր խնդրածդ ստացա՞ր, Հոգւով Սրբով մկրտուեցա՞ր», հաւա-

նակուն է պիտի թոթովէ և վարանքով՝ «կը յուսամ թէ», պիտի ըսէ: Սակայն Սբ. Գրքին մէջ այսօրինակ անորոշութիւն գոյութիւն չունի: Սբ. Դիւրքը՝ գրուած գիրքերուն մէջ ամենէն յստակն է: Անիկա որոշ է փրկութեան մասին, ո՛յնքան որոշ որ եթէ մէկը փրկուած է և գիտէ իր Սբ. Դիւրքը, հարցուր անոր թէ՝ արդեօք փրկուած է, բոլոր խոնարհութիւնով, սակայն մեծ վստահութիւնով պիտի ըսէ. — «Այո՛, փառք Աստուծոյ, Քրիստոս փրկած է զիս»: Նոյնպէս որոշ է Հոգւով Սրբով մկրտութիւնը, ո՛յնքան յստակ որ, եթէ մէկը իր Սբ. Դիւրքը գիտէ, և Հոգւով Սրբով մկրտուած է, երբ հարցնես անոր թէ՝ «Հոգւով Սրբով մկրտուեցա՞ր», բոլոր խոնարհութիւնով, սակայն մեծ վստահութիւնով պիտի ըսէ. — «Այո՛, փառք Աստուծոյ, իր անունը գթութեանը մէջ Ան ինձի շնորհած է Հոգւոյն Սրբոյ մկրտութիւնը»: Անշուշտ, կատարելապէս կարելի է որ մարդ մը փրկուած ըլլայ և Սբ. Գրքի մասին ունեցած անգիտութեան երեսէն վստահ չըլլայ այդ մասին, նոյնպէս կարելի է որ մէկը Հոգւոյն Սրբոյ Մկրտութիւնը ունենայ և սակայն Սբ. Դիւրքի վարդապետութեան մասին չունենալով պէտք եղած ծանօթութիւնը, չգիտնայ իրեն պատահածը(*):

Երկրորդ, Հոգւով Սրբով մկրտութիւնը՝ Հոգւոյն Սրբոյ գործն է, բոլորովին տարբեր վերստին ծնունդէն և անոր լրացուցիչը: Այլ խօսքով Հոգւոյն Սրբոյ զօրութեամբ վերստին ծնունդի բան մըն է, Հոգւով Սրբով մկրտուիլ բոլորովին տարբեր բան մը, ետքէն անդի ունեցող, յաւելուածակուն և լրացուցիչ բան մը: Ասիկա

(*) Ըսուածին ամենացցուն օրինակը Սամուէլ Մօրիսի կեանքն է: Սամուէլը անար դիմեցե՞կ մեկի: Ծ. Խ.

յայտնի է Գործք. 1:5րդ համարէն ուր կը կարդանք, «Շատ չանցած, դուք պիտի մկրտուիք Հոգւով Սրբով»: Ասոնք դեռ մկրտուած չէին այսպէս, սակայն, վերստին ծնած մարդիկ էին: Ի՞նչպէս գիտենք ստիկաւ Որովհետեւ Յիսուս ըսաւ, «Արդ, դուք մաքուր էք այն խօսքով որ ձեզի խօսեցայ»: Ի՞նչ կը նշանակէ «խօսքով մաքուր»: (Տե՛ս 1 Պետ. 1:23): «Նորէն ծնած ըլլալով՝ ոչ թէ ապականացուած սերմէն հապտ անապականացուէն Աստուծոյ կենդանի և յաւիտենական խօսքովը»: Դարձեալ Յիսուս վկայեց միեւնոյն մարդոց համար Յովհ. 13:10ին մէջ և ըսաւ, «Դուք մաքուր էք բայց ոչ թէ ամէնդ», և Յովհաննէս մեկնաբանելով սոյն խօսքը կ'ըսէ, «Վասնզի գիտէր զանիկա որ զինք պիտի մատնէր»: Այլ խօսքով Յիսուս ծանոյց թէ բոլոր առաքեալներ վերստին ծնածներ էին ի բաց առեալ Քիսկարիովտացի Յուդայէն: Ասոնք վերստին ծնած էին, սակայն տակաւին Հոգւով Սրբով պիտի մկրտուէին: Ասիկա նաեւ յայտնի է Գործք 8:12, 15-17էն ուր կ'ըսուի՝ թէ Փիլիպպոս Սոմարիա գնաց ու քարոզեց, և թէ կարգ մը աշակերտներ հաւատացին ու մկրտուեցան: Արդ, մկրտութեան ո՞ր ձեւը յարմար ալ ըլլայ, անոնք ուղիղ ձեւով մկրտուեցան, որովհետեւ Փիլիպպոս առաքելական պատուիրակ մըն էր: Սոյն մըկըրտուած հաւատացեալներու մէջ ոմանք իրապէս փրկուածներ և նորէն

ծնածներ էին: Երբ զանք 15 և 16 համարներուն, կը տեսնենք որ Պետրոս և Յովհաննէս Սոմարիա եկան և աղօթեցին որ Հոգին Սուրբը ստանան: Վասնզի դեռ անոնց մէկուն վրայ իջած չէր»: Այսպէս շատ որոշ է՝ որ մէկը նորէն ծնած կրնայ ըլլալ առանց Հոգւով Սրբով մկրտուած ըլլալու: Անշուշտ, ամէն վերստին ծնած մէկը ունի Ս. Հոգին իմաստով մը, որ կը բերակի վերստին ծնողին հեռու և ծածուկ մէկ խորանին մէջ, Իր ներկայութեան գիտակցութիւնը ունի անիկա: Սակայն ունենալ հիւր մը՝ տանդ հեռու և ծածուկ անկիւնը, բոլորովին տարբեր է այդ հիւրին ամբողջ առունը իրեն համար ունենալէն: Նոյնպէս Սբ. Հոգին ունենալ ներքին մարդուն ծածուկ մէկ անկիւնը՝ բան մըն է, բոլորովին տարբեր բան, Սբ. Հոգւոյն ներքին մարդը լեցնելն ու գրաւելը: Արդ եթէ դուն վերստին ծնած ես՝ փրկուած մըն ես, եթէ այս գիշեր մեռնիս պիտի երթաս Քրիստոսի հետ ըլլալու, սակայն յարմարութիւն չունիս, ծառայութեան համար, և չես վայելեր ի՞նչ որ Տէրը հայթայթել է Իր զաւակներէն իւրաքանչիւրին համար: Հոգւով Սրբով Մկրտութիւնը ժառանգական իրաւունքն է անցնիւր Աստուծոյ զաւակին, ինչեալ և Յարուցեալ Քրիստոսով: Եթէ այսօր զայն չունիս, ուրեմն չես պահանջած Աստուծոյ՝ քեզի համար պատրաստածը:

Շարունակելի

ԱԶԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օր մը լուզորդ բարեկամս ծովու լողանքի ժամանակ մարդ ազատելու փորձը կը կատարէր վրաս: Որքան տառն որ ես կը պայքարէի ինքզինքս ազատելու համար, անիկա անգոր կը մնար զիս ազատելու, սակայն, երբ ես կը մնայի անշարժ և թոյլատրէի իր ազատը ընելու, այս բանը զինքը կը

հաճեցնէր և դիրութեամբ զիս կը տանէր եզերքը: Ասիկա որքան կը նմանի մեր հոգիներու փրկութեան: Մինչեւ որ մենք չհասկնանք թէ սակարող ենք օգնելու մենք մեզի և չթոյլատրենք Տէրը որ ուզածը ընէ մեզի հետ, չենք կրնար ունենալ այն օրհնութիւնը որ կարելի եղած է մեզի Գողգոթայի միջոցաւ:

Ք. Կ.

ԱՌԱՆՁՆ ՈՒԹԻՒՆ

Առանձնութեան մեջ Տիրոջ հետ ըլլալ ինչ քաղցր ու անգուգակոն վայելք մըն է, զոր հաւատացեալը կրնայ վայելել:

Առանձնական աղօթքի տրուած պահերը՝ որքան օրհնաբեր են ու ինչ մեծ ազդեցութիւն ունին, այս մասին չէ որ կը փափաքիմ խօսիլ, թէեւ անիկա անուրանալի ճշմարտութիւն մը՝ ու իւրաքանչիւր հաւատացեալին փորձառափար վայելած, խիստ թանկագին մէկ առանձնաւնորոհումն է:

Առանձնական աղօթքի մասնաւոր յատկացումը պահերէն զատ, կան նաեւ պատահական պարագաներ, որոնց մէջ կարելի է երկինքի աս մօտ երթալ ու Տէրոջ ներկայութեան քաղցրութիւնը վայելել: Ասիկա կրնայ ըլլալ ճամբորդութեան մը պահուն, երբ շուրջ ճամբորդներու բազմութիւնը կը վըրստայ, սակաւին դուն կրնաս քու ներքին խորհուրդներուդ մէջ կատարելապէս Տէրոջը հետ ըլլալ: ՊՏՈՅՏԻ ատեն, մանաւանդ երբ բնութեան սփռելիքները դիտելով, միտքդ ու հոգիդ գորուումը Արարչին հիասքանչ գործերէն, Իր խորհուրդաւոր ներկայութիւնը կը վայելես առատապէս կը յագենաս ներքնապէս: Այս վիճակդ երբ երկար տեւէ, ֆեկեթի Արարչին մեծութեան առջեւ ինքզինքդ ոչինչ ու հիւլէ մը միայն նկատելով, կը խոնարհիս Իր վեհափառութեան առջեւ:

Գիշերուան լուռ մէկ պահուն, երբ բունդ կը փախչի աչքերէդ, փոխանակ անհամբերութեամբ հառաչելու ու քունը սպասելու, ինքզինքդ ազնիւ ու վեհ խորհուրդներու տաս, երկնային քաղցր ներկայութիւնը կրնաս կուշտ ու կուռ վայելել այնքան իրական, որքան ծնրողի աղօթքի ժամուն: Մեծ օրհնութիւններ կրնաս ըն-

դունիլ, որոնք ըմբռնելի պիտի չըլլային օրուայ զբաղ ժամերուն: Լուսքեան ու առանձնութեան մէջ անցումը պահերը, նոր ու օրհնալ սեսութիւններ կուտան մեզի:

Ինչպէս մանուկ մը իր մօրը սիրալիր բազուկներուն մէջ լաւ կերպով կը հանգչի ու անոր սէրը կը վայելէ, ճիշդ նոյնպէս Աստուծոյ զաւակին համար կարելի է Տէրը վայելել միայն առանձնութեան պահերուն: Երբեմն մեր խորհուրդաւորութիւններուն մէջ թաղուած, Տէրոջ ըսելիք մեր խօսքերը կրնան հատնիլ, սակայն տակաւին կրնանք Անոր ճոխ սէրը ըմբռնել: Ան մեղմօրէն կը խօսի մեր սրտին ու ինքզինքը կը յայտնէ յատկօրէն, «Յօդ»ի նման լռիկ կ'իջնեն Իր օրհնութեան շիթերը, մեզ կենդանացնելու ու նորոգելու համար:

Մեր բարեկամական ու ընկերական յարաբերութիւնները մեծապէս կ'ազդեն մեզ, հոգեւոր կեանքի աճման մէջ, անոնք կը նպաստեն այս վերելքին մէջ սակայն երբեք բաւականաչափ զօրութիւն չեն կրնար ստատել մեր կեանքի զօնդակ ու խորտուրտ ճամբորդութեան ընթացքը շարունակելու: Մենք պէտք ունինք անձնական ու առանձնական յարաբերութեան այն միակ Անձին հետ, ուրկէ կը բխի բոլոր օրհնութիւնները ու զօրութիւնը: Աղօթքի համար տրուած անձուկ պահերը բաւական չեն, առատ ժամանակի կարօտ են որպէսզի մեր հոգիները կըշտանան ու ուռճանան:

Բազմութեան մէջ կարելի չէ գտնել այս օրհնութիւնները, ինչ որ անանձնութեան մէջ առատ են: Առանձնութեան ծրար յաճախ աննշան, անշուք կ'երեւի, եւ ո՛չ բաղ-

ԱՐԹՆՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ

ԱՍՏՈՒԾՈՅ ԳՈՐԾԻՆ ՄԷՉ

Պիլլիի մասին զուարթ նկարագրութիւն մը կուգայ անկլիգան երէցէ մը, զոր սապէս կը պատմէ. «Առտու մը երբ նախաճաշի համար սեղան պիտի նստէինք, լսեցի ռոմանային մը արահին մէջէն, մէկը ծանր քայլերով կը յառաջանար և քալած ատեն կ'ըսէր, փառք Տիրոջ, փառք Տիրոջ, Երբ զուռը բացի, տեսայ ուրոխադէմ կարճ-լիկ մարդ մը, հագուստ մը հագած որ իրեն համար շատ մեծ էր, յայտնի էր թէ ուրիշին համար ձեւուած էր:

— Լաւ, բարեկամս, ո՞վ էք դուք, հարցուցի:

— Ես Պիլլի Պրէյ եմ, պատասխանեց, միշտ աչքերը յառած ինծի և զանոնք քթթելով՝ իսկ դուք երէցն էք, հարցուց:

— Այո՛, այդպէս եմ, պատասխանեցի:

ձալի, սակայն ան թանկագին գոհարներ կը պարունակէ իր ծոցը, ան որ զայն իմաստութեամբ կը բանայ ու կը գործածէ մեծապէս կը հարստանայ ու կեանքը կը ճոխանայ:

Իմաստունը կը ճանչնայ առանձնութեան յարգը, կը գնահատէ զայն ու կ'օրհնուի, իսկ միամիտը կ'ատէ զայն ու կը փնտռէ միայն ու միայն բողմութեան խուժանը:

Առանձնութիւնը հոգեւոր կեանքի մէջ մեծ նշանակութիւն ունի, ու խորունկ, նոյս կեանքի առաջնորդող շաւիղ մըն է այն:

Ո՛հ, թէ այս ընդհեր ա՛լ աւելի վայելիքն ու օրհնութիւնք:

Յուսադեմ Գոյր Բ. Գ. ԵԱՐՏԸՄԵԱՆ

— Փառք Աստուծոյ. փրկուած էք:

— Այո՛, փառք Տէրոջ:

— Եւ Տիկինը՞ (ցոյց տալով ճաշարանը), նէ ալ փրկուած է:

— Այո, փրկուած է:

— Փառք սիրելի Տիրոջ:

Ուղղութեամբ դէպի ճաշարան, ես իրեն ճամբայ տուի որ անցնի Սեն-եակէն ներս մտնելով խորունկ խորհրդութիւն մը ըրաւ տիկնոջ և հարցուց.

— Ծառաներ ունի՞ք:

— Այո՛, երեք հատ և անոնք խորհանոցն են:

— Անոնք ալ փրկուած են:

Ես հաստատական կերպով պատասխանեցի ցոյց տալով խորհանոցին դուռը. Ուղղութեամբ հոն, և շատ չանցած կը լսէինք որ ամէնը բարձրաձայն զԱստուծոյ կը փառաբանէին միաբերան: Երբ խորհանոց մտանք, հոն էր Պիլլի Պրէյ, շատ ուրախ և կ'երգէր, «Բանանը երջանիկ վայր է, իմ երթալիք տեղս է»: Ետքը մենք դարձանք ճաշարան մեր տարօրինակ հիւրին հետ, երբ յանկարծ զիս գրկելով, իր թեւերուն մէջ՝ պտտացուց զիս սենեակին շուրջը: Այնքան անսկիւղի եկած էի որ, մեծ ջանք կը թափէի ինքզինքս ուղիղ բռնելու մինչեւ որ լրացնէր շրջանը: Յետոյ զիս դնելով ակոթիս վրայ ուրախութենէն կը դառնար և դառնալով կ'ըսէր թէ ուրախ էր ինքը որքան որ կրնար պարունակել իր սիրտը այդ ուրախութիւնը: Զինքը հրաւիրեցի նախաճաշը միասին ընելու. հաւանեցաւ շնորհակալութիւններով: Ան իրեն համար ընտրեց կաթ և հաց, «որովհետեւ ես դեռ մոռնուկ եմ կ'ըսէր»:

Իր ամբողջ կեանքին մէջ, ար-

դարեւ ան հոգիներ շահելու և սուրբերու շինութեան ետեւէ եղած էր։ Նոր մատուռի մը բացման հանդէսին, աչքէ անցուց վայրը՝ ժպտելով, և աչքերը քթթելով ըսաւ. «Տէրը տուած է ձեզի սիրուն տեղ մը ձեր պաշտամունքը կատարելու, սակայն Ան այժմ կ'ուզէ որ գեղեցկօրէն կահաւորէք զայն։ Արդ, Տէրոջը եկեղեցւոյն կահաւորման համար պէտք եղածը սրբուած հոգիներ են։ Երբ մենք թողութիւն գտած, կնքուած և սրբուած ըլլանք, ոչ թէ միայն յարմար ենք Տէրոջը տան համար՝ երկրի վրայ, այլ մենք երկինքի համար ալ պիտի ըլլանք լաւ զարդեր»։

Պիլլի Պրէյ իր վերջին օրերուն՝ մահուան շուքի ձորին կը նայէր առանց վշտի և վախի։ Երբ ուժէ կ'իյնար և դուրսի մարդը հետզհետէ կը տկարանար՝ կ'ըսէր. «Իմ հայրս շուտով զիս պիտի հրաւիրէ երկինք»։ Մահուան մերձեցումը լուր տուող բժշկին կ'ըսէր. «Փառք Աստուծոյ քիչ ատենէն երկինք պիտի ըլլամ, երբ հոն հասնիմ, ըսաւ գրաւիչ ժպիտով մը, հետս պիտի տանիմ քու յարգանքներդ և պիտի ըսեմ անոնց թէ՛ շուտով դուն ալ պիտի գաս»։

Վախճանը եկաւ 25 Մայիս 1868ին երբ 74 տարեկան էր։ Երբ բարեկա-

մին մէկը հարցուց թէ՛ չէ՞ր վախճար մահէն և կորսուելէն, ան պատասխանեց, «Ի՞նչ, ես վախճամ մահէ, ես կորսուիմ։ Իմ Տէրս պարտութեան մասնեց մահը։ Եթէ ես դժոխք երթամ՝ պիտի աղաղակեմ «Փառք իմ սիրելի Փրկչիս, մինչեւ որ անյատակ գուբին կամարները դզրդան, և մինչեւ որ Սատանան ինծի ըսէ. «Պիլլի այս տեղը քեզի համար չէ», և անմիջապէս պիտի թռչէի դէպի երկինք աղաղակելով, փառք, փառք ու գովութիւն Աստուծոյ»։

— Քիչ ետքը այս երջանիկ հոգին անցաւ իր հանգստեան, ձգելով իր ժամանակին վրայ այնպիսի համբու և ազդեցութիւն զորս իշխան մ'իսկ չէր կրնար ունենալ։

Մենք կ'երեւակայինք զինքը հանքագործերը իր շուրջը հաւաքած երկրին խորերը, անոնց հետ հոն աղօթելու, և հակառակ խիստ հովին և ցուրտին՝ հոգիներ շահելու համար արշաւանքներ կատարելու վրայ, գիւղերը, կամ բեմին վրայ կեցած կը բացագանչէ, «Օրհնեցէ՛ք Տէրը, օրհնեցէ՛ք Տէրը», եթէ զիս ստակաւին մէջ ալ դընեն խցածակէն, «Հալիւուեա, Տէրոջը փառք պիտի աղաղակեմ»։

ՎԵՐՋ

ՍՐ. ԳԻՐՔ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Աստուծոյ հրաւալի խօսքը (Սաղմ. 19)

Յիշեալ Սաղմոսին մէջ երկինքը կը պատմէ Աստուծոյ փառքը, զօրութիւնը և մեծութիւնը։ Բնութիւնը այս բոլորը կ'ընէ, և սաղմոսագրուն այդպէս կ'ըսէ, սակայն երբ կարգը կուգայ խօսելու Աստուծոյ խօսքին վրայ ան կ'ըսէ, «Աստուծոյ օրէնքը կ'աւարեալ, ճշմարիտ և սուրբ է։ Ես կը սիրեմ հնու-

թիւները, գրեթէ մարդոց մէջ ալ հիները, գրեթէ ըսի, չէ թէ բոլորովին... Ան որ հին է արժէքաւոր է, և մարդիկ հին բաները կը պահեն հնութեան սիրոյն համար։ Այս Գիրքը չափ հին է, ամենէն հինը։ Ն. Կտակարանը 2 հազար տարուան, իսկ հինը՝ 3500 տարուան հնութիւն ունի։ Այսուհան-

դերձ երկուքը միասին մէկ և ամենէն նոր Գիրքը կը կազմեն դարուս*:

Եթէ հրաշալի խօսքի մասին խօսիլ սկսիմ, եօթը ուրիշ հրաշալի բաներ ի յայտ կուգան, եթէ խօսիմ եօթը հրաշալի բաներու վրայ ուրիշ եօթանասուն հրաշալի բաներ կ'ելլին, յետոյ 7 հարիւր և այդպէս շարունակ: Այսօր այս կարճ ժամանակի մէջ պիտի խօսիմ միայն անոր մէջ տեսնուած հրաշալի միութեան վրայ:

Անոնք 66 ուրոյն գիրքերն են. Հինը 39, Նորը՝ 27: Երկու խոշոր մասերու իսկ չեն բաժնուիր անոնք, այդպէս ընել ուզողներ իրենք գիրքնք փորձանքի կ'ենթարկեն: Ասիկա լաւագոյնս կրնամ բացատրել ինծի ծառայութեամբ մեր փորձաւորութիւնովը: Ասիկա փափաք մը ունէր իր ինքնաշարժը նեղ անցքերէ ապահով քելու ճարպիկութիւնը ցոյց տալու: Արդարեւ այդ ճիւղին մէջ համբաւ մը չուած էր արդէն, թէպէտ օրէնքի հաւատակ էին նման ճարպիկութիւններ: Օր մը բլուրն ի վեր իր ինքնաշարժը վազցուցած պահուն դիմացէն կը տեսնէ որ կուգան ուրիշ երկու ինքնաշարժ: Հաշիւ կ'ընէ որ երկուքին մէջէն հազիւ թէ ինքնաշարժ մը անցնելու տեղ կայ, կը փորձէ անոնց մէջէն անցնիլ, հաշիւը ճիշդ կ'ելլէ, կը յաջողի, սակայն ետքէն կը նկատէ որ ատիկա իրեն սուղի նստած է, որովհետեւ ինքնաշարժը վնասուած է լըրջօրէն: Այսպէս կ'ըլլան նաեւ երկու կտակարաններուն մէջէն անցնիլ ուզողներ, զանոնք իրարմէ բաժնելու համար:

(*) Եթէ այսօր ամենաժողովուրդական գիրք մը հիմք հաբիւր հազար ծախուի յաջողութիւնն է, այսօր 1 տարուան մէջ միայն անգլիերէն Ս. Գիրք ծախուած է 1 միլիոն հաբիւր հազար:

Այս միութիւնը զարմանահրաշ է, մօտ 40 իրարմէ արհեստով, վիճակով, զարգացումով, ժամանակով և տատանումով տարբեր մարդիկ տարբեր նիւթերու վրայ գրած են, ուր կան պատմութիւն, փիլիսոփայութիւն, բանաստեղծութիւն, բարոյագիտութիւն, վէպ, կենսագրական, նամակ եւն. այսուամենայնիւ հրաշալի ներդաշնակութիւն կայ իրարու միջեւ: Գի'ր 40 մարդ փողոցի մը անկիւնը, ինքնաշարժի արկածի մը իրենց ակնաստեսի պատմութիւնը ընելու, այնքան հակասութիւններ պիտի երեւնան՝ որ դատաւորը պիտի չկրնայ վճիռ մը արձակել: Ի՞նչպէս կ'ըլլայ այս միութիւնը Սբ. Գրոց մէջ: Պատճառը սա՛ էր՝ թէ ամէնը կը ղեկավարուէին մեծ Միտքով մը: Ամենուն նիւթն էր գալիք Մեսիան՝ հինն մէջ, եկած Մեսիան՝ աւետարաններուն մէջ, կրկին գալիք Մեսիան՝ թուղթերուն մէջ: Հետաքրքրական է Ծնունդոցը ուսումնասիրել Յայտնութեան գրքին հետ, բազմաթիւ գեղեցիկ նմանութիւններ պիտի տեսնուին հոն: Նոյնպէս Եսայեայ մարգարէութիւնը Աւետարաններուն և Յայտնութեան հետ:

Յետոյ հրաշալի է այս Գիրքը մարդոց միջեւ յառաջացուցած մշակութիւն, եւ ունեցած եւ Չինացի ուսանողներ իմ դասարանիս մէջ, շատ փայլուն մտային կարողութեամբ, սակայն Չինաստան չունի այն մշակոյթը և քաղաքակրթութիւնը ինչպէս որ մինք ունինք:

Հրաշալի է նաեւ ներքին և արտաքին փոփոխութիւնները զորս յառաջ կը բերէ այս Գիրքը զինքը ընդունողներուն վրայ: Կղզի մը կար զոր այցելած էր Զարլզ Տարուին: Հոն հանդիպեցաւ շատ յետաճող ժողովուրդի մը, մինչեւ իսկ կտակածեցաւ թէ անոնք մարդկային արարածներ

ենս Միսիոնար մը գնաց այդ տեղ, գտաւ որ անոնք լեզու մը ունին. սորվեցաւ իրենց լեզուն: Սբ. Գիրքը սորվեցուց անոնց իրենց մայրենի լեզուովը, և փոփոխութիւնը քսան տարուան մէջ այնքան հսկայական էր որ Տարվին երբ կրկին այցելեց կղզին հոն գտաւ առաջին աստիճանի քաղաքակրթեալ ժողովուրդ մը, որոնք կ'ապրէին փրկութեան ուրախութիւնով: Տարվին գացած էր հոն կորսը-

ւած կապը (link) գտնելու մարդոց և կապիկներու միջեւ, կարծելով թէ սոյն կղզւոյն բնակիչներն էին այդ կապը: Ինչ յուսախաբութիւն: Ահա տարբերութիւնը որ կայ Աստուծոյ խօսքը ընդունողներուն և չընդունողներուն միջեւ, անկյո-սաքսոններուն և հեթանոսներուն միջեւ:

Վերջ

Sofp. Հարրի Ռիմսըր

Ձ ո ռ ու Բ ա ժ ա կ ն ե ռ

Սբ. Գիրքը որ է Աստուածաբան, այսինքն, Աստուծոյ ներշնչուած անսխալ գիրքը — կը պարունակէ իր մէջ, մեծ աւետիս և պատգամ մը բոլոր մարդկութեան: Սակայն անոր մեծ ազդարարութիւնն է նախ՝ մարդուն անկումը և անոր հետեւանքը յաւիտենական մահ՝ բաժանում իր Արարչէն. (Մենդոց 3:23—24. Հռովմ. 3:10—12. 19,23):

Սակայն, փառք ըլլայ որ այս ցաւալի լուրը ատուով՝ հոն չի վերջանար Աստուծոյ խօսքը, այլ Ան ունի շատ մեծ աւետիս մը որպէս դարման՝ մեղանշած մարկութեան, որ է, Քրիստոսի փառաբար մահովը պատգաւաւորած մեծ ու յաւիտենական եւ ձրի փրկութիւն մը (Եբր. 9:28. 2:3,9:12. Յայտ. 23:17): Ո՛հ փառք ըլլայ, կեանք և անմահութիւն կայ Գողգոթայի վրայ խաչեալ Քրիստոսի պատուական արեան մէջ. Ալելուիա:

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱԿԸ

Յաւերու եւ մահուան բաժակն է ան, զոր Յիսուս ինքը խմեց. «Այն գաւաթը (բաժակը) զոր Հայրը ինծի

տուաւ, պիտի չի խմեմ զանիկա (Յովհ. 18:11):

Այո, այս գաւաթը, այն դառն գաւաթն է զոր Տէր Յիսուս ինքը խմեց, բոլոր մարդկութեան մեղքը, անձեռք ցուն ու դատապարտութիւնը իր վրան առնելով Գողգոթայի խաչին վրայ:

Ես. 53:4—5 «Իրաւցնե Անիկա մեր ցաւերը վերցուց, ու մեր վիճերը իր վրայ առաւ, Անիկա մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ, եւ մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ, մեր խաղաղութեան պատիժը Անոր վրայ եղաւ եւ անոր վիրքերովը մեզ բժշկուեցանք:»

Ահաւասիկ, Խաչեալ Դառին վրայ կը տեսնենք Ամենակալ Աստուծոյ Սէրը ու Արդարութիւնը դէմ առ դէմ: Սէրը կը զոհէ իր Միածին Որդին. իսկ Արդարութիւնը կը պահանջէ մեղքին պատիժը անարատ Դառնուկէն՝ խաչը ելած, մարկութեան մեղքին համար փրկագին վճարելու իր պատուական արիւնովը, երբ ամբողջ երկրի վրայ կը տիրէր 3 ժամուան մեծ ու թանձր խաւար մը (Մատթ. 27:45):

Ո՛վ այս տողերը կարդացող բա-

քեկամա, արդեօք տակաւին պիտի շա-
րունակէ՞ր քու անհոգ և անտարբեր
վիճակիդ մէջ, ոտնակոխ ընելով Գող-
գոթայի Սերն ու Ձոնը:

Դառն գաւաթ մը որ քեզի համար
խմեց քու Արարիչդ, ինչ որ քոք բա-
ժինդ էր խմել այս դառն և մահուան
գաւաթը: Ու հիմա, ինչին վրայ եր-
կընցած Փրկչին թեւերը քեզ կը հը-
րաւիրեն ըսելով. «Ինծի եկուր ով
յոգնած և տառապած հոգի, ես քեզի
համար երկինքէն իջայ, ահա քեզի
համար ու քու տեղդ կը զոհեմ իմ
կեանքս՝ որպէսզի դուն ապրիս յա-
ւիտեան, եկուր ինծի»:

Ո՛հ մի մերժեր Փրկչին քաղցր
հրաւէրը. — «Ինծի եկե՛ք, ով բոլոր
յոգնած ու բեռնաւորուածներ եւ ես
ձեզ կը հանգչեցնեմ» Մատթ. 11:28:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԱԿԸ

«Փրկուքեան բաժակ»ն է ան. Սաղմ.
116:13ին մէջ այսպէս կը կարդանք.

«Փրկուքեան բաժակը պիտի առ-
նեմ ու Տեղը Անունը կանչեմ»: Երբ
որ, մեր Տէրը, ցաւերու և մահուան
գաւաթը խմեց, այն ատեն սոյն գա-
ւաթը փոխուեցաւ մեզի համար «Փըր-
կութեան բաժակ»ին. Ալիւլիա...:

Աջակողմի աւազակը անմիջապէս
խմեց այս երկրորդ բաժակէն ու մտաւ
դրախտ իր սիրելի Փրկչին հետ.
Ղուկ. 23:42—43: Անկէ յետոյ հազա-
րաւորներ, միլիոնաւորներ ամէն ազ-
գէ, ցեղէ ու լեզուէ ոնկէ խմեցին,
որոնք կը հանգչին հիմա երկինքի մէջ,
ապաստելով յաբութեան առաւօտուն թնչ-
պէս նսեւ այսօր երկրի վրայ կան
միլիոնաւոր հաւատացեալներ որոնք
խմած ու ճաշակած են նոյն «Փրկու-
թեան բաժակէն», ու կ'ապասեն այն
երջանիկ յոյսով, որ իրենց Փրկչին ու
Թագաւորը երկինքի ամպերուն վրայ

պիտի յայտնուի որպէսզի զիրենք
դուրս հանէ այս տառապանաց աշխար-
հէն ու տանի իր երկնային և յաւի-
տեանական բնակարաններուն զորս կը
պատրաստէ. Յովհ. 14:1—3:

Փառք ըլլայ, որ տակաւին նոյն
փրկութեան բաժակը կը հրամցուի ա-
մէնուն որ գան ու խմեն. «Ան որ կ'ու-
զե՛ կենաց ջուրէն ձրի առնե (Յայտ.
22:17):

Խմել հոգեւոր իմաստով կը նշա-
նակէ հոս, ճշմարիտ հաւատքով մօ-
տենալ Բրիտանի և խոստովանիլ Ա-
նոր քու մեղքերդ ու Ձինք ընդունիլ
որպէս բոլ անձնական Փրկիչդ և ազա-
տարարդ: Ահա այս է խմել, վերստին
ծնունդ, ապաշխարութիւն: Ուստի ե-
կուր և այսպէս դուն ալ, հաւատքով
խմէ նոյն բաժակէն քանի տակաւին
ուշ չէ:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԱԿ

«Օրհնութեան բաժակ»ն է ան. (Ա.
Կոր. 10:11) այսինքն, հաղորդութեան
բաժակ: Այս բաժակը շատ լուրջ և
խորունկ իմաստ մը ունի, շատ խոր-
հըրդաւոր է:

«Բանի այս գաւաթէն խմէք ու
այս հացէն ուտէք, Տեղը մահը կը
պատմէք մինչեւ որ Խնճ գայ» (Ա. Կոր.
11:26):

Այս արարողութիւնը, մեղքերու
թողութեան համար չէ երբեք, այլ
իրենց մեղքերուն թողութիւն ստացած
Ար. Հոգիէն վերստին ծնած բոլոր հա-
ւատացեալներուն առանձնաշնորհումն
է զայն կատարել, և այս արարողու-
թեամբ անոնք կը յիշեն ու կը պատ-
մեն շատ լրջութեամբ, երկու մեծ
դեպքեր. —

Ա. Տէրոջը մահը (կատարուած մեծ
դէպք մը):

Բ. Տէրոջը երկրորդ գալուստը (կատարուելիք մեծ դէպք մը)։

Առաջին դէպքը (Տէրոջը մահը) յիշելով կը փառաբանեն իրենց Տէրը երախտագիտական սրտով մը որ իրենց համար մեռաւ։

Իսկ երկրորդ դէպքը (Տէրոջը երկրորդ գալուստը) յիշելով կը միութարուին և կը հրճուին այն երջանիկ օրուան յոյսով, որ Տէր Յիսուս կրկին պիտի գայ մինչեւ ամպերը որպէս փեսան՝ դիմաւորելու համար իր Հարսը (Ճշմարիտ Եկեղեցին՝ որ կը բաղկանայ մի միայն փրկեալներու միլիոնաւոր խումբէն) (Գործք. 2:47)։ Ու այսպէս յաւիտեան Տէրոջը հետ պիտի ըլլանք (Ա. Թեսսղ. 4: 16—18)։

ԶՈՐՐՈՐԴ ՈՒ ՎԵՐՋԻՆ ԲԱԺԱԿ

Բարկութեան բաժակն է. (Յայտ. 14:10) Այս բաժակին մասին խօսել կամ գրել, ինծի հաճոյք չի պատճառեր անշուշտ, սակայն պարտական եմ նկարագրելու զայն գոնէ մի քանի տողերով։ Աւետարանի ամէն մէկ նամարիս պատճառեայ (քահանայ կամ քարոզիչ) Աստուծոյ և մարդոց առջեւ պատասխանատու է քարոզելու Աւետարանը իր ամբողջութեամբ, եթէ չի քարոզեն՝ հշմարտութիւնը, (որոնց թիւը շատ է այսօր) անոնց դատապարտութիւնը ու հաւոր պիտի ըլլայ մեծ դատաստանին օրը։ Սբ. Դիրք, ինքը, թէեւ լուռ, սակայն ամենամեծ և զօրաւոր քարոզիչ մըն է, ու կը քարոզէ դարերէ ի վեր, յաւիտենական երկինք մը բոլոր փրկեալներուն, և յաւիտենական դժոխք՝ բոլոր անապաշխարներուն, վերջապէս երկու յաւիտենականութիւն՝ մարդիկ հա-

ւատան կամ ոչ, տարբերութիւն չընկեր (Դան. 12:2. Մատթ. 2:45)։

Արդ, այս գաւաթէն պիտի խմեն բոլոր անոնք, որոնք կը մերժեն հիմա խմել «Փրկութեան բաժակ»էն։

Այո, Աստուած Սէր է, սակայն և այնպէս Աստուած արդար է. ամենամեծ ոճրագործութիւնը երկրի վրայ։ Աստուծոյ Սէրը մերժել և ոտնակոխ ընել է։ «Փրկութեան բաժակ»ին մի քիչ նկարագրութիւնը կարդալ՝ Յայտ. 14:10—12ի մէջ։

Ուստի, կրկին կ'աղաչեմ, սիրելի բարեկամս, հարուստ կամ աղքատ, ուսեալ կամ ագէտ, եկուր և խմէ այս «փրկութեան բաժակ»էն պարզ և ճշմարիտ հաւատքով մը, որ այսպէս քութանկագին հոգիիդ փրկութիւնը և յաւիտենականութիւնը ապահոված՝ «Կենաց Առաջնորդ»էն (Գործք. 3:15) ուրախութեամբ շարունակէ քու ճամբադ դէպի վեր, ապաստելով այն երջանիկ յոյսին, Արդարութեան Արեգակին ծագելուն. (Տիտոս 2:13. Մաղաքիա 4:2)։

«Բայց մեր քաղաքականութիւնը (Հայրենիքը) երկինքն է ուրկէ ալ Փրկչին կ'սպասենք, Տէր Յիսուս Քրիստոսի, որ պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը՝ իր փառաւոր մարմինին կերպարանակից ըլլալու» (Փիլ. 3:20—21)։

Արդ, կը մաղթեմ բոլոր ընթերցողներուս, որոնք պիտի կարդան այս տողերը, հոս և ուրիշ տեղեր, զիրենք տեսնել ու միանալ երկինքի մէջ, և վայելել բոլոր սրբոց հետ միասին, մեր Սիրելի Փրկչին ու Թագաւորը և Անոր պատրաստած երջանիկ յաւիտենականութիւնը։

Կ. Յ. ԹՈՒՄԱՆԱՆ



ՄԵՐ ՀԱՅ ԵՐԿՍԵՌ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ



ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԵՐ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԸԼԼԱԼ ՀԻՆ ԱՏԵՆՆԵՐԸ

1538 տարուան Մայիս ամսուան մէկ առաւօտուն՝ Պրոնսայի հարաւարեւմտեան, հին՝ սուկայն գետեղերեայ՝ Սուրբեղու Քաղաք կոչուած գեղեցիկ մէկ քաղաքին նեղ փողոցներէն երիտասարդ զոյգ մը ներս կը մտնէր, իրենց հետ ունենալով երախայ մը: Քաղաքին ծայրը պզտիկ տան մը մէջ տեղաւորուեցան: Մարդը կը կոչուէր Պէռնար Պալիստի՝ երեսուն տարեկան մարդ մը՝ որ գործ կը փնտռէր իւր երկրահափ, նկարիչ կամ ապակեգործ: Մտային քարձր կարողութիւններով օտառուած էր, սակայն ամենէն աղեկը այն էր որ Աստուծոյ բաները իր սրտին համար գերազանց հրապոյր մը ունէին: Այն ատենները՝ միտքերը խորապէս յուզուած էին կրօնական պայքարներով, որ ցնցած էր ամբողջ Եւրոպան ժ.Ձ. դարուն: Սուրբերուն Քաղաքը Նոր դադափառներու ամրոցն էր: Հերետիկոս կոչուածներէն շատեր հոս կ'ապաստանէին որոնց մէջ էր նաեւ բարեկարգող Կալվինը: Հոս էր որ Կալվինը գրեց իր «Աւետարանի Քարոզները և Մեկնութիւնները»: Ասոնք կ'ընդունուէին քահանաներու և կղերներու կողմէն, որոնց սրտին դատած էր Աստուած, և այսպէս ճշմարտութիւնը կը տարածուէր ամէն կողմ: Կալվինի սորվեցուցածներէն օրհնուածներուն մէջ Կը գտնուէր Փիլեպէր Համլէն անուն

մէկը՝ որ հեղահամբոյր և աղքատ մէկն էր: Ասիկա անձնական բարեկամը եղաւ Պալիստին, և, իր պարզ և ջերմեանդ խօսակցութիւններովը՝ «Քրիստոսի փառաց Աւետարանին լոյսը» Պալիստի սրտին մէջ ծագեցաւ Համլէն այնքան մեծ փափաք ունէր Աւետարանը տարածելու որ ապագրութիւն ստրկելով Սբ. Գրքեր տպեց և շրջակայ գիւղ և քաղաքներու մէջ տարածեց: Ան դարձաւ նշանաւոր հերետիկոս մը, և իր կեանքը ապահով չէր երբեք: Պալիստի կը սիրէր զայն և իր տունը միշտ բաց էր հալածուած Համլէնին համար: Տարիներ անցան և Պալիստին անունը իւր «Հիւկեան Բրուտ» Պրոնսայի ազնուականութեան և չարաքայական ընտանիքին ծանօթ եղաւ: Իր թշնամիները սիրով խաբուկի վրայ կը դնէին զինք եթէ չվախնային. որովհետեւ իր անմրցելի կիտուածանկարները մուտք գտած էին ազնուականներու դղեակներէն և արքայական տուններէն ներս: Իր գործերը կը բաղկանար արձանիկներէ, ստոմաններէ, ծաղկամաններէ, պնակներէ, գուլթաներէ, եւն., որոնցմէ շատեր կը մնան ցայսօր: Սբ. Բարթողիմէոսի այն ահաւոր սպանդէն (Օգոստ. 24. 1572) ինքը ազատեցաւ Շատ կանոնաւոր կերպով կազմակերպուած այն ջարդին 70,000 Բողոքականք (այլ անունով Հիւկեաններ) սպաննուեցան Պրոնսայի մէջ: Գրիգոր ժ.Գ. Պապին հրամանով մասնաւոր շքադրամ կոխուեցաւ հերի-

տողոսութեան վրայ իր տարածած այս փառաւոր յողթութիւնը յաւերժացնելու համար... Կարողոս Թ. Թագաւորին տառջին վիրաբոյժը Տօքթ. Պատէ կ'ըսէ, «Երբեք չպիտի կրնամ մոռնալ այն սարսազողեցիկ տեսարանը՝ որ Օգոստոսի մէկ ցերեկոտն լոյսը պարզեց իր ամբողջ ահաւորութեանը մէջ, Պայծառ, շողշողուն արեւ և տնամպ երկինք մը՝ մեր վրան, Սէնի արիւնախառն ջուրերը՝ մեր ոտքերուն տակ, յօշոտուած դիակներով խռնուած փողոցները՝ մեր առջեւ, և իբր պատուած էր Կիրակի օրը, որ աղւրը օր կը նկատուէր Կոտորածին երկրորդ օրը իրիկուան դէմ, Թագաւորը կրկին կանչեց զիս իր քովը Ահաբեկածի երեւոյթ ունէր, մարմինն ու հոգին տեղի կուտային Ան ըսաւ, «Ձեմ գիտեր թէ ինչ ունիմ, սակայն երկու երեք օրերէ ի վեր միտքս և մարմինս անկանոն վիճակի մէջ են: Ծուրջս բռն մը չեմ տեսներ բայց միայն ժանտատեսիլ դէմքեր՝ արիւնլուայ, երանի թէ տկարներն ու անմեղները խնայուէին:» Ստիպեցի զինքը որ կոտորածը դադարեցնէ, և, արդարեւ փող հնչեցնելով հրամայեց որ մահուան գնով արիւն չթափուի այլեւս:

Տարիներ անցան, Պալիսսիին բարեկամներէն շատերը սպաննուեցան: Ինքն ալ ձերբակալուելով բանտարկուեցաւ իբր անուղղայ հերետիկոս մը: Թագաւորը այցելեց զինքը բանտին մէջ, և ըսաւ, «Բարի մարդս, տարիներէ ի վեր մեր ընտանիքին ծառայութեան մէջն ես և մենք պաշտպանեցինք քեզ որ կրակներու և կոտորածներու ատեն կրօնքիդ երեսէն քեզի մնաս մը չհասնի. սակայն հիմա Կիզերը (Հիւկեաններու ռաբիմ թշնամի, կաթողիկ, հօր և ազնուական գերդաստան մը) և ժողովուրդս այնպիսի ճնշում մը կը բանեցնեն իմ վրայ որ ստիպուած եմ յանձնել քեզ թշնամի-

ներուս ձեռքը: Քեզ հետ գտնուող այս երկու խեղճ կիները վաղը պիտի այրեն, նաեւ քեզ և թէ դարձի չգտաս» «Վեհափառ Տէ՛ր,» պատասխանեց Պալիսսի, «ես պատրաստ եմ Աստուծոյ փառքին համար կեսնքս զոհելու: Կ'ըսէք թէ կ'արգահատիք ինձի, աւելի ճիշդը ես եմ որ կ'արգահատիմ ձեզի որ «ստիպուած եմ» ի պէս խօսքեր կը զրուցէք: Ասիկայ թագաւորի մը վայել լեզու մը չէ: Ո՛չ դուն, ո՛չ Կիզերը քու ժողովուրդիդ հետ միասին չեն կրնար ստիպել զիս, զի ես գիտեմ ինչպէս մեռնիլ:» «Ի՞նչ տնպատկառ սինլքոր,» պատասխանեց պալատականներէն մէկը, որ վերջը ինքը արձանագրեց այս դէպքը: «Ան որ կ'ընայ մեռնիլ չի կրնար ստիպուիլ,» ըսած է Սենեկա:

Վերոյիշեալ խեղճ երկու կիները հետեւեալ օրը մոխիրի վերածուեցան, սակայն Պալիսսի տարեցաւ Հօօր Թեւ մը կը պաշտպանէր զինքը, և այդպէս ազատեցաւ կրակոտ փորձութենէն: Քանի մը ամիս եւս մնաց Պասդիլ բանտը, յետոյ խաղաղութեամբ մեռաւ իր բանտի խուցին մէջ: Ան հաւատարիմ էր ցմահ և պիտի ընդունի փառաց պատկը այն օրը իր Փրկչէն՝ որ Փառաց Թագաւորն է: Խ. Թ. Ս.

ՊԱՏԳԱՄԸ ԵՒ ՈՉ ԹԷ ՊԱՏԳԱՄԱՅԵՐԸ

Տիկին մը որ սովորութիւն ունէր խժժելու այն քարոզիչները որոնք կը քարոզէին իր պատկանած եկեղեցւոյն բեմէն, օր մը այս կերպով կը խօսէր բարեկամի մը երբ վերջինը կը պատասխանէ. — «Ամէն ուստու ես ցըրուելիչին կ'սպասեմ յուսալով որ ինձի նամակ մը ունի: Երբ ստանամ նամակը անիկա կը զրուէ զիս և մոռցնել կուտայ ցրուելը: Քարոզիչներ Աստուծոյ պատգամաբերներն են, եթէ դուն հետաքրքրուած ըլլայիր պատգամով այսպէս հակառակ պիտի չխօսէիր տնոց դէմ: Ի. Փ.

ՀԱՐՑՈՒՄ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Հարց.— Յիսուս ո՛ւր կը գտնուէր
երբ մարմինը գերեզման էր, կամ Դա-
ւիթ ի՞նչ ըսել կ'ուզէր երբ կ'ըսէր
թէ, «Անոր անձը գերեզմանը չթողուե-
ցաւ (Գործք 2:31)»

Պատ.— Յիսուս իր հետ խաչուող
աւաղակին ըսաւ թէ, «Դուք այսօր ին-
ծի հետ դրախտ պիտի ըլլաք» Եփես.
4:9 կ'ըսէ թէ, «Ինք... երկրի վարի
կողմերը իջաւ», Հռ. 10:7ին մէջ «երկ-
րի վարի կողմը» կոչուած է «անդունդը»
Գործք. 2:27 և 31 համարներուն մէջ
«Գերեզման» բառը (լուսանցքին մէջ՝
դժոխք) գործածուելէ Սյա բոլոր չփո-
թութիւնը յառաջ եկած է տնոր համար
որ թարգմանիչները յունարէն «Հասես»
բառին համապատասխան բառ չեն
կրցած գտնել։ Սյա պատճառաւ անգ-
լիներէն սրբագրեալ թարգմանութիւնը
«Հասես» բառը պահած է (տես նաեւ
հայերէն գրաբար թարգմանութիւնը)։
Արդ «Հասես» բառը մեր աշխարհաբար
թարգմանութեան մէջ ալ սխալ գոր-
ծածութիւն ունի։

Մօտերս մեր մէջ գտնուող աւե-
տարանիչ մը ունենալով չփոթ գաղափար
առն բառին նկատմամբ՝ չփոթութեան
մասանց իր միամիտ ունենդիրներն ալ
երբ կրկին ու կրկին ըսաւ թէ՝ «Յի-
սուս Դժոխք իջաւ» երբ կը բացատրէր
Անոր խոնարհութիւնը՝ Մեզի այնպէս
երեւցաւ որ Յիսուսի վրայէն կրակի
հոտ կուգար Դժոխքէն ելլելէն(?) հա-
ջը իր յարութեամբը։ Անշուշտ Սբ.
Դիրքը այդ բառը գործածել էր, ինքն
ալ հետեւեցաւ անոր, բայց իբր խօս-
քը բացատրող մէկը՝ պէտք էր ուղիղ
բացատրէր և բուն իմաստը ըսէր։

Ա՛րդ, Յիսուս իջաւ ոչ թէ Դժոխք,
այլ Հասես, այսինքն բոլոր մեռելնե-
րուն՝ մահուան եւ յարութեան միջեւ
անցուցած ժամանակամիջոցէն իրենց

ԶԻՅԱՏԷ ՄՈՒՀԱՊՊԷԹ

(Ղուկ. 7:42)

Ալլահըն պիզէ տօղրու օլսն մու-
հապպէթինէ շիւպհէմիզ վա՛ր մը, պու
մուհապպէթին տգամէթի հազգընտա
պիր թէսավվուրըմըզ վա՛ր, անըն տէ-
րինլիյինի էօլլմէք, օնտ լէնկէրաթմադ
միւմքի՞ն մի։ Պիլտ շիւպհէ պու սի-
ւալլարա ճէվապըմըզ՝ մէնֆի տիր։
Պու սիւալլը պաշգա պիր թարգտտ է-
տէլիմ, անըն աքսի թարաֆընտան։
Ալլահըն՝ քէնտինէ տօղրու օլսն մու-
հապպէթիմիզէ շիւպհէսի վա՛ր մը։ Է-
յէր Օ պու կիւն Պետրոսս էթտիյի
սիւալլը էտիպ տէսէ, «Պունլարտան
զիյասէ պէնի սէվէրմի՛սին», ճէվապը-
մըզ նէ՞ օլտմագ։ Յիսուս պու սիւալլը
Պետրոսս իւչ տէֆտ թէվճի՛ էթտի,
պու շէյ հատտը գաթընտա Պետրոսըն
մուհապպէթինէ տօղրու պիր շիւպհէ
իպրազ էտէր իտի։

Պիւաշիւպհէ ճիւմլէմիզ տէ Բրիս-
տոսը սէվէրիզ, ֆագաթ շու զիյասէ
լուղէթի ճիւմլէմիզի տէ շաշըրըպ, օ-
նտ «էվլէթ» ճէվապընը վէրմէզտէն
էվլէլ պիզի տիւշիւնաիւրէճէք իտի։
Բրիստոսը սէվմէք պիր շէյ «պունլար-
տան» վէ հէր շէյտէն զիյասէ Անը սէվ-
մէք քիւլլիյէն պաշգա պիր շէյ տիր։
Բապընա գարչը մուհապպէթին վար,

զսնուած վայր։ Այս վայրը բաժնուած
է երկուքի։ Մէկը արդարներուն գըտ-
նուած վայրը, որ կը կոչուի Դրախտ,
պարտէզ նշանակութեամբ, իսկ միւ-
սը՝ չարերուն գտնուած տեղը, որ
կը կոչուի Դժոխք, տաճանքի վայր։
Ղազարոսը առաջինին մէջ էր իսկ
Մեծաառնը՝ երկրորդին մէջ, և անոնց
և ասոնց մէջտեղ կար անանցանելի
վիճ մը։ Յիսուս երբ մեռաւ մարմինը
գերեզման էր իսկ հոգին՝ հատէսին մէջ
արդարներուն կողմը։

Ս.

օ տօղրու տըր, ֆազաթ զիյասե մուհապպէթին վա՞ր մը, հաթթա պու մուհապպէթին տիկէրլէրին Ալլահա օլան մուհապպէթինտէն զիյասե՞ մի տիր: «Պու իլիսեհն հա՞նկըսը անը ցահա զիյասե սեւիկեհեհ»: Ալլահը սէվէն պաշգալար տա վար, ֆազաթ սէնին մուհապպէթին անլէրինքինտէն զիյասե պիր չէյ մի՞ տիր:

Քեհնիսիլի ճե՞ խոսոսլարսա պազգալար իլէ բուպար էսիյօրուզ: Ֆէրիսի Սիմոն քէնտի քէնտինի օ կիւնաքետար գատըն իլէ բուպար էտէրէք կէօրտիւ քի, օ մէքրուհ, նափաք, իծթիմար պէշէրիյէտէն խարիճէ աթըլաճագ, ճէհէնէմ խարճը պիրիսի տիր: Մէրգուսէյէ բուպարէն քէնտի քէնտինի մուգատտէս, վազիֆէլէրինտէ սատըգ, սէմա իչիւն էյի պիր գանտիտա կէօրիւյօր իտի: Ճալիպի տիգգաթ տըր կէօրմէք քի Յիսուս պու իքիլէրի նասըլ բուպար վէ թագաիր էտիյօր: Սիմոն Յիսուսըն ալագլարընըն երյգանմասը իչիւն սու կէթիրմէմիչ իտի, անը էօփմէմիչ իտի (ճարի օլան ուսուլա կէօրէ), զէյթ հաղըյլէ պիլէ պաշընը մէս էթմէմիչ իտի: Հալպուքի թահգիր էյլէտիյի պու գատըն, վագատա շէրիաթը պիփէրվա թէճավուզ էտէրէք պէօյիւք պիր կիւնաքետար իտի, լաքին մէրգուսէ պէօյիւք իտի թէվպէսինտէ, պէօյիւք իտի թէվաղընտա, պէօյիւք իտի վազֆիյէթինտէ, պէօյիւք իտի Յիսուսա տօղրու մուհապպէթինտէ: Էվվէթ, պու գատըն Սիմոնտան զիյասե Յիսուսը սէվէն պիր օլտու:

Պու գասընըն մուհապպէթի ճեհէսէ՞ն ճեհէք էսիյօր իսի: Եալընըզ պիր մէնպատան, օ տա պու իտի, քէնտինին զէվալլը պիր կիւնաքետար օլտուղընտա տաիր տէրինճէ միւթթալի օլմասը: Նէ՞ սէպէպտէն Սիմոնըն մուհապպէթի նօգստան իտի: չիւնքի պու

իթթիլար տէրունի անտէ էքսիք իտի: Յիսուս պուսուհն հագիգաթ օլտուղընըն, իքի ֆարգլը տէրէճէտէ պուսուհնտա պօրճլուար իլէ իզահ էտիյօր: Օնլարտան պիրիսի 50, տիկէրի 500 ղուրուշ պօրճլու տըր: Սիմոն քէնտինի 50 ղուրուշ պօրճլու հիսս էտիյօր, գատըն՝ քէնտի քէնտինի Սիմոնըն 10 միալի աղըր պիր պօրճ վէ եիւք ալթընտա հիսս էտիյօր իտի: Պու պէօյլէ օլտուղըն թագաիրտէ պիլէ հէր իքիսիտէ պօրճլարընըն էտա էթմէքլիքտէ զէյրի միւգթէտիր իտիլէր: Ազ կիւնաքետար, չօգ կիւնաքետար միւսավի սուրէթտէ աֆվլըզա միւսթաճ տըրլար, քէնտիլէր քէնտիլէրինէ աֆվ էտէմէզլէր, կիւնաքետար աֆվը իչիւն Յիսուս Քրիստոսա միւսթաճ տըրլար: Պագաթ Ալլահըն հուզըրընտա զայլէթ կիւնաքետար օլտուղըմըզըն հիսսի, վէ օնտ բաղմէն Ալլահըն աղիմ լութֆուհըն իզհարաթը, տէրունիմիգտէ Անտ տօղրու զիյասե մուհապպէթին ղըլեհանընա վասըթա օլուր: Տէրունտէ հասըլ օլան պու մուհապպէթ՝ էվվէլա աճը կէօզ հալլարը տէօքմէյէ, պատէհու քէնտինէ էն գըյմէթլի օլան շէյլէրի (Պու գատընըն վագատտընտա նէտամէթ կէօզ եալլարը, շէրէֆի օլան սաշը, զիգիյմէթ հաղ շիշէսի, Յիսուսըն ալագլարընտ կէթիրիլտի) սէվտիյի իշլասքետար ուզըրունտ գուրպան էթմէյէ հաղըր օլուր: Քի՞մ պիլիր, պու գատըն օ պէօյիւք կիւնաքետար նէ՞ միւստա սիպէթլէ տիւշմիւշ իտի: Պէլքի ճէնտէթինտէն, պէլքի ալտանտարագ, պէլքի պիլմէճարլէրիյէ եա տփանսըզ, հէր նէ տէ օլտա, տիւշիւշիւ պէօյիւք օլտուղըն կիպի, թէվպէսի տէ պէօյիւք, մուհապպէթի միւշէրիլէֆ, հաթթա քէնտի փաքըզը իլէ իթթիլար էյլէյէն Սիմոնըն մուհապպէթինտէն զիյասե իտի:

Սեւիկեհ մուհապպէթ իօլիմէյի սե

«ԷՅ ՊԻՐԱՏԵՐԼԵՐ»

Գաղ. 6:18

Պու կիւն պիւթիւն տիւննաւա
Քապարմըզ Յիսուս Քրիստոսուն իսմի-
նի թաշըյան քիմսէլէր Քրիսթիան իս-
մի իլէ մալիւմ տիրլէր: Իլք ասրտա
անլէրին իսմի «չայիրալէր», «մու-
գատտէսլէր» վէ «պիրատէրլէր» իտի:
Պու իսմլէրին իչինտէ միւմինլէրին
գուլաղընա էն շիրին վէ էն թաթլը

քեզլիզ եհեր: Քէնտի մալլարըյլէ Լի-
ֆէնտիմիզէ խըզմէթ էյլէյէն գատընլար
հազգընտա օգուլօրուզ, ինթիմալ պու
գատըն անլէրաէն պիրիսի իտի Մու-
հապսէթ տաթմա քէնտի քէնտինի
խըզմէթ իլէ վէ ֆէտա էթմէք իլէ
պէյան էտէր: Րէսուլլարըն, Քրիստոս
իչիւն քէնտի հայաթլարընը ֆէտա է-
տէն շէհիտլէրին էօմրլէրինտէ անը
կէօրիւլօրուզ: Աթիսէքի ուֆագ պիր
վազաա, մուհապսէթին ֆէտա էտէն
խասսիյէթինէ սատէ պիր նումուէնէ
տիր:

Պիր վալիտէ աղըր խասթա օլա-
րագ եաթագաա եաթար իտի Քիւ-
չիւք պիր օղլու վար իտի, քի պիր
գանարեա գուշու պէսլէր իտի: Պու
գուշ չօգ չամաթա չըգարըր վէ խաս-
թա վալիտէսինի րահաթսըզ էտէր ի-
տի: Պուշու անլայարագ գուշու պուշ-
գաաընա վէրտի վալիտէսի տէտի «Օղ-
լում, օ գատար սէվտիյին գուշու նի-
չիւն պաշգաաընա վէրտին»: «Վալի-
տէմ, տէտի չօճուգ, օնու սէվէրիմ
ֆազաթ սէվկիւլիւ վալիտէմտէն զի-
յատէ տէյիլ, պէն վալիտէմի անտէն
չօգ զիյասէ սէվէրիմ»:

Քեաշքի պիղիմ մէվգիմիմիզ տա-
խի Քրիստոսա աղրու պէօյլէ օլա ի-
տի Եանի Անը սէվմէք, զիյասէ սեվմեհ
հիւ շէյսեհն զիյասէ սեվմեհ:

Խ. Թ. Ս.

կէլէնի սօնրաքի տիր: «Էյ պիրասեր-
լեր»: Անլէր պիրի պիրլէրինի պիրա-
տէրլէր տէյու պիլէրէք անլէրին թէշ-
քիլ էթմիշ օլտուգլարը հիյէթ հագիզի
պիր ուխուզվէթ օլուպ եէքտիկէրլէ-
րինի պիրատէրլէր մագամընտա կէօ-
զէտիրլէր իտի: Եէնի Ահտա «Քրիս-
թիան» թապիրի սալթ իւշ տէֆա իս-
թիմալ օլուճմուշ տըր, լաքին «պի-
րատէրլէր» թապիրի զայէթ չօգ: Պօ-
ղոս րէսուլ միւմինլէրէ վէ քիլիսէլէրէ
եազմըշ օլտուղու մէքթուպլարտա
գուլլանաղըր թապիր «պիրատէրլէր»
տիր, հաթթա անլէրի թապիր վէ
թէքտիր էթտիյի զէմանլարտա պիլէ
անլէրի «պիրատէրլէր» տէյու թէսմիյէ
էտիյօր:

«Էյ պիրասերլեր»:

Պու թապիր հայաթ խուսուսուհա
օլան պիրլիյի կեօսքերի:

Այնի փէտէր վէ վալիտէտէն աօ-
ղան քիմսէլէր եէքտիկէրլէրինէ պի-
րատէր օլուլար: Րուհանի ճիհէթլէ
տախի գանուէն այնիսի տիր: Րուհանի
ուխուզվէթ եէնի աղրուշ իլէ Ալլահ
էվլատ օլմագլըգտան մէյաանա կէլիր:
Պու ուխուզվէթ Րուհանի հայաթըն
իզհարաթընըն պիր շէքի տիր: Հա-
գիգաթէն նէ ազիմ պիր իմթիյաղ տըր
Ալլահըն ֆամիլեասընըն պիր ազաը
օլմագ, իշթէ հագիզի պախթիյարլըզ
պու տըր: Ալլահը փէտէր մագամընտա
պիլմէք վէ Անտէն աղմուշ օլուպ Ա-
նա էվլատ օլանլար իլէ պէրապէր
տախի պիրատէրլէր օլմագ հագիգա-
թէն նէ միւպարէք վէ ճէլիլ պիր հալ
տըր:

Պու թապիր մուհապպերին Ֆար-
զընը կեօսքերի:

Պիրատէրլէրիմիզ տէրտիմիզի
եանմուգ թապիրի պիր հալ տըր: Խէ-
լաքեարմըզ Յիսուս Քրիստոս պիլէ
Գեթսեմանիտէ շէյթան իլէ ճէնկլէշիր
իքէն գալպինէ էն եազըն օլան իւշ

շայիրալէրինի ետնընտա պուլուռնաուեր-
մագ իսթէտի «... Պուրատա գալըպ
պէնիմ իլէ պէրապէր ուշանըգ տու-
րունուզ», աէտի Քրիստոսուն գալպի
ինսանի իշթիրագա հասրէթ չէքտի:
Պիր քիմսէ քէնտի գալպինի աշմագ
իսթէր էն սէվկիւլիւ ուշան շախսա,
իշթէ պու հագիգաթըն էն ալի ճինսի
Քրիսթիանըգտա մէվճուտ տըր: Միւ-
մինլէրին ճիւմլէսի Քրիստոստա պի-
րատէրլէր տիրլէր, իմտի եէքտիկէր-
լէրինի սէվէրլէր ճիւմլէ հալ ու քէյ-
ֆիյէթտէ, քէտէրտէ եա սիրուրտա,
մէյուսիյէթտէ եա մէսէրրէթտէ եէք-
տիկէրի իլէ հէմ հալ օլուրլար: Պիրի
պիրլէրինի ազիմ վէ իլահի մուհապ-
պէթ իլէ սէվէրլէր, պիրի պիրլէրինի
գալըրըրլար: Լաքին չօգ աճըլը տըր
քի տրամըգտա պու կիւնլէր իլահի
Ֆամիլետտան օլուպ վէ տյնի հայթա
մալիք օլան միւմինլէր եէքտիկէրինէ
գարը պուզը ու տաւվէթ թաշըմագ-
տա տըրլար: Փարգըլը ֆըրգա վէ ճէ-
միյէթլէրէ ալիտ օլան միւմին պիրա-
տէրլէր ուֆագ վէ էստսըզ օլան սէ-
պէպլէրտէն սօլայը պիրիպիրինէ գար-
ը օլ գատար չիտտէթլի ատաւվէթ
կէօսթէրմէքտէ տիրլէր քի պուռու
տիւնեաւիլէր տախի անլամըշ օլարագ
անլէրին թէօքէզինէ սէպէպ օլմագտա
տըր: Յովհաննէս ըէսուլ տէյօր, «Քէն-
տի պիրատէրինէ հէր պուզը էտէն՝
գաթիլ տիր...»: Զօգ աճըլը տըր քի
պու կիւնլէրտէ միւմինլէր պու ճինա-
յէթտէ պուլուռնագտա տըրլար:

Ալլահըն քէլամը պիգէ էօյրէտի-
յօր քի. «Թագվայո գարնտոշ մու-
հապպէթի վէ գարնտոշ մուհապպէթի-
նէ մուհապպէթ գամմ էտէլիմ»: Հա-
գիգաթէն քրիսթիան մուհապպէթի
թէն վէ գան ալագալորընտան չօգ տ-
լի վէ մուգատտէս պիր հալ տըր չիւն-
քի իլահի պիր րոպըթա տըր, վէ պու
րոպըթայը հիչ պիր գուվվէթ, հաթթա

էօլիւմ պիլէ չէօղէմլմլի տ/ր:

Պու քապիր ահէնկ վէ իօպալըգ
իմա եհէր:

Պօղոս ըէսուլ Կորնթոս, միւմին-
լէրինէ եազար իքէն պէօյլէ սէօյլէյօր,
«Է՛յ պիրատէրլէր, սիգէ Բապալըմըզ
Յիսուս Քրիստոսուն իսմի իլէ ըէնա
էտէրիմ, քի ճիւմլէնիգին սէօղիւ պիր
օլսուն, վէ տրանըգտա իսթիլաֆ օլ-
մայըպ՝ քեամիլէն հէմէֆքեար վէ հէմ-
րէյ պուլուռնաւընըզ»: Լաքին նէ գա-
տար աճըլը տըր քի ալա մուհիմմ վէ
հայաթի օլմայան մէսէլէրտէն նաչի
միւմինլէր պիրի պիրլէրինտէն ալըլ-
մըշ օլարագ պիրի պիրլէրին տէյնիտէ
սէօյլէյիպ պիրի պիրլէրինէ գարը իլէ-
յիպ պիրի պիրլէրին իլինի պօգմալա
շալըշօյրլար: Պիրի պիրլէրինտէն տաժմ
խըրսըզլամագ, պիրի պիրլէրին թէէ-
սիրինի գըրմագ հաթթա տիւնեաւիլ-
լէրին տրատընտա պիլէ, պիրի պիրլէրին
պէյնիմէմէք, հասէտ նիգա վէ պու կի-
պի պի հիսապ հալար կէօրիւնմէքտէ
տիր քի անլէրտէ Քրիստոսուն մու-
հապպէթինին օլմաւըղընա էն պէօյլէք
իսպաթ տըր: Միւմինլէր հէմ ըէյ վէ
հէմէֆքեար օլմալը տըրլար, վէ Քրիս-
տոսուն պաղընտա իշտալըզ հէման պու
եօլ իլէ միւմիւն օլուր:

Պու թապիր Քրիսթիան հայարը-
նըն մեկպարնը կիօսքէրի:

«... Սիգին միւտէրրիսինիգ պիր,
եանի Քրիստոս տըր, վէ ճիւմլէնիգ
պիրատէրլէր սինիգ», Մատթ. 23:8:
Պու սէօղլէր Յիսուսուն տըր, վէ տըլը
ուխուվվէթին սըրըր վէ մէնպալը քէն-
տիսի տիր: Քրիստոս քիմլէրին մու-
ալլիմի իսէ անլէր եէքտիկէրինէ պի-
րատէր տիրլէր: Մուալլիմէ տօղրու
օլան մուհապպէթ տիր քի պիրատէր-
լէրէ տօղրու օլան մուհապպէթի տա-
խի ուշանտըրմագ տըր: Հագիգաթէն
Քրիստոս տօղրու օլան մուհապպէթին
վէ անըն նէթիճէսի օլան վագֆիյէթին

հօգսանը տըր քի միւմին պիրտտէր-
ւէրին արտաքին ապու կիպի նախօշ
անվալ զուհուր էթմէքտէ տիր :
Միւմինին բուհանի հայաթընըն վէ
պիրտտէրլէրի սէվմէլէրինին սըրրը
Բրիստոսու սէվմէք տիր Յիսուս Պետ-
րոսա, «Սէն պանա իման էտէ՞րմիսին»,
«Պէնիմ իչիւն հէր շէյէ բազի օլո՞ւր-
մուսուն» վէ զայրի, պու կիպի սիւալ-
լար էթմէյօր, իլլա «Սէն պէնի սէ-

վէ՞րմիսին» : Հազիզի մուհապպէթ հէր
շէյէ բազի էտէր : Միւմինլէրին պիրի
պիրինէ գարշը օլան ատապէթլէրինին
պաշլընա սէպէպի Բրիստոսու ազ սէվ-
մէլէրի վէ նէթիճէսի օլարագ անա ազ
վազֆ օլունմալարը տըր : Միւմինլէր
Բրիստոսա կէօսթէրտիքլէրի մուհապ-
պէթին մըգտարը իլէ պիրի պիրլէրինի
սէվէ պիրլիլէր :

Վեր. ԹէՈՏՈՐ Ե. ՏԱՂԵԱՆ

ԱԼԹՈՒՆ ՌԻՓԱՂԸ

2. Բուհանի Հայաքըն Անմէրէլէրի

Ալլահը կ'որմէք.— Անըն հուզու-
րընա տաիմա միւթթալի օլ, չիւնքի
բուհանի հայաթ Ալլահըն հուզուրընըն
տէվամի հիսսի, վէ Անընլէ տաիմի ա-
լագա տըր : Անտէն այրըլմագլըղը հիչ
խաթէմէյէճէյին պիր տօսթ կիպի Անը
տաիմա եագըն հիսս էթմէք կէրէք
տիր, կէրէք տուտա, կէրէք բահաթ-
տա վէ կէրէքսէ էօմրիւն միւթէնէվլի
անվալընտա Պիզիմլէ ալագա էթմէսի
իչիւն Ալլահըն խուսուսի թային է-
տիւմիչ պիր վագթը եօգ տըր : Օ տա-
լա հօրուլմագ : Օ օլ գատար լաթիֆ
վէ բահիմ տիր քի, հէր շէյի Անըն էլի
թէտպիր էտէր վէ Քպիզի իգթիտա-
րըմըգտան զիյատէ թէճրիպէ օլունմա-
ղա պրագմագ :

Ալլահը սիւկմէք.— Անըն նասի-
հաթ վէ իխթարաթընա տիգգաթ էթ :
Պիզ Անըն սէսինի ֆիքրիմիղէ տօգա-
նան ինճիլին սէօզլէրինտէ, պիզէ ա-
փանսըզ վագը օլուն թէսալվուրլուր-
տա, թահրիրաթտա թէսաուիլէ էթտի-
յիմիզ կէրմի քէլումլարտա, վաիզին
հա տօսթուն եատա զարիպ պիր քիմ-
աէնին տուտագլարընտան տիւշէն սէօզ-
լէրինտէ իչիտիրիզ :

Ալլահ իլէ գօնոււմալ.— Ալլահ
իլէ միւլագաթտա օլ Տուտագ իլէ օ-

լան միւլագաթտան զիյատէ գալպ իլէ
օլան միւլագաթ լագըմ տըր : Պու
միւլագաթ՝ սապահըն էրքէնինտէ օլան
միւթէլատա, կէրէք ֆէրեատ էտէն
անլարտա, վէ կէրէքսէ սէօզ իլէ օլան
տուտա օլապիլիր : Թէնհատա Անըն
իլէ չօգ կէօրիւշ :

Ալլահը սիւկմէք.— Էօմրիւն եալը-
նըզ Անա վագֆ վէ թախսիս էտիւմիչ
օլուն : Անտէն պաշգա պիր քիմսէյի
եա նէսնէյի սէվմէ : Պիզի Բէնտինտէն
ուզագլաշտըրան մուհապպէթտէն ֆէ-
րաղաթ էտէլիմ : Անա օլան մուհապ-
պէթտէն նաշի քէնտիմիզի հէր քէսէ
էօտիւնճ վէրէլիմ, լաքին քէնտի քէն-
տիմիզի եալընըզ Անա թախսիս էթմիչ
վէ վէրմիչ օլալըմ :

Ալլահ հագգընսա սիւլէնմէք.—
Ալլահ հագգընսա թէֆէքթիւրիւ մէն
էտէն հէր շէյի բէտա էթ : Պիլա չիւպհէ
եէվմի վագիֆէլէրիմիզի իճրա էթմէ-
լիյիզ, անլէրի իգթիտարըմը տաիլէ-
սինտէ քեոմիլ մոնատա իճրա էթմէ-
լիյիզ, ֆագաթ անլէր կէօյա Ալլահըն
թահթը նագարընտա իճրա էտիլիյօր
կիպի իճրա էտիլմէլիլէր, չու ֆիքրլէ
քի անլէր Ալլահ թարաֆընտան էմր
էտիլմիշլէր տիր, վէ անլէրի իճրա
էթմէք Անըն նագարընտա խօշ պիր շէյ
տիր :

ԵՐԷՑ

ՃՇԴՈՒՄ

Թերթիս անցեալ թիւին մէջ տպագրական վրիպմամբ մեր պատուական բարեկամ և թիւրքիոյ Հայ Աւետ. եկեղեցիներու յարգելի Ազգապետին մականունը եղած է «Ճէլալեան» փոխանակ «Ճիւղեան»ի:

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Եղբ. քարոզիչ Վեր. Օ. Թապագեան, Աղեքսանդրիայէն, 10 Ե. Դ. կը նուիրէ «Աւետ. Զայն»ի ֆօնտին առ ի գոհունակութիւն Աստուծոյ, իր ազնիւ կնոջ ծանր հիւանդութենէ մը տպաքինման առթիւ:

ԹԵՐԹԻՍ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Եզիպոս՝	25 Ե. դ.
Ամերիկա՝	1 ¹ / ₂ տոլար
Ֆրանսա եւ Սիւրիա՝	30 Ֆրանկ

Նկատի ունենալով մեր հայրենակիցներէն ոմանց ներական անձուկ վիճակը, յօժար եմք այդպիսիներուն զեղչեալ գնով մը դրկել թերթը, եթէ առ այդ մեզի իմացնեն անձամբ կամ մեր գործակալի միջոցաւ:

ՍԵՐ ՔՈՎԸ ԿԸ ԳՏՆՈՒՆ ՇԵՏԵՒԱԼ ԳՐՔՈՅԿՆԵՐԸ

1. Զարլի Գըլզըն	24 էջ	Գին՝	1 Ե. դ.
2. Սամուէլ Մօրիս	32 "	"	1 Ե. դ.
3. Դործի Պիղասոսի	24 "	"	1 Ե. դ.
4. Իզմասիոս	20 "	"	կես Ե. դ.

Վերոյիշեալ գրքիկները հանելի, խիստ հետաքրքրաւոր եւ հոգեւունջ պատմութիւններ են: Իմել խմբագրութեան հասցին:

Ուշադրութիւն. — Բոլոր դրամական առաւումներ, յօդուածներ եւ քղրակցութիւնք պէ՛ք Է հասցեագրուին հետեւեալ կերպով. —

K. T. SARIAN

2, Rue Ahmed Pacha Hasanen,
Shoubra, Cairo (Egypt).

PRINTED IN EGYPT BY

SAHAG MESROB PRESS,

25, SHARIA JEWFIK CAIRO.